19) ամփոփում և բաժնի պետին է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների  կողմից համայնքի տարածքում իրականացվող սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև աջակցող ցանցի մյուս մասնակիցներին է փոխանցում համայնքի կողմից իրականացվող սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին բաժնի պետի հետ ճշտված տեղեկատվությունը.

20) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման ուղղությամբ.

21) մասնակցում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական աջակցության համայնքային ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.

22) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների հետ սոցիալական համագործակցության համաձայնագիր ընդունելու կամ դրան միանալու վերաբերյալ.

23) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

24) իրականացնում է անձանց դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.

25) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.,

26) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

**3. Կազմակերպական շրջանակը**

**3.1.** Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1) չունի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ,

2) օժանդակում է համապատասխան ստորաբաժանման (աշխատակազմի) ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է համապատասխան ստորաբաժանման (աշխատակազմի) աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը,

3) ենթակա և հաշվետու է իր անմիջական ղեկավարին,

4) չունի իրեն ենթակա աշխատողներ,

5) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար:

**3.2.** Որոշումներ կայացնելու լիազորությունները

Մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

**3.3.** Շփումները և ներկայացուցչությունը

1) աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ,

2) աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ,

3) աշխատակազմից դուրս կարող է հանդես գալ որպես ներկայացուցիչ:

**3.4.** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

**4. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**4.1.** Կրթություն, որակավորման աստիճանը և ստաժը

«Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն կամ այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացների համապատասխան վկայական և սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

**4.2.** Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային

ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**5.Համայնքային ծառայության դասային աստիճանը**

Բաժնի առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

>>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 **թվականի** N 1786-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 51.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 100.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 81.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղու հարևանությամբ 51.6 (հիսունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 100.6 (մեկ հարյուր ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին 81.69 (ութսունմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ժաննա Հակոբի Ջանոյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2023L7NAQR տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղու հարևանությամբ 51.6 (հիսունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված 100.6 (մեկ հարյուր ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին 81.69 (ութսունմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Ժաննա Հակոբի Ջանոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2023 թվականի N 1485-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 117/1 ՀԱՍՑԵԻ 19.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 119 հասցեի 227.81 (երկու հարյուր քսանյոթ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24052021-08-0039 վկայական):

Քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15062023-08-0037 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 117/1 հասցեի 19.9 (տասնինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 145-Ա որոշումը և քաղաքացի հիմք ընդունելով քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 02-ին N 7970 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 119 հասցեի 227.81 (երկու հարյուր քսանյոթ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Շահումյան փողոցի N 117/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 19.9 (տասնինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 495291 (չորս հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2023 **թվականի** N 1484-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 7/ 1 ՀԱՍՑԵԻ 371,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 1-ին փակուղի 7/1 հասցեի 371,1 (երեք հարյուր յոթանասունմեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 1-ին փակուղի 7/1 հասցեի 371,1 (երեք հարյուր յոթանասունմեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2023 **թվականի** N 1783-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 2584-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22 -Ի N 3390-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 22-ի <<Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի հարևանությամբ համայնքային հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը 18,67 քառ.մ, ընդամենը 18,67 քառ.մ մակերեսով կառուցապատված հողամասով կառույցը համայնքային սեփականություն համարելու մասին>> N 3390-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 19/12/2022 թվականի NԿ-19122022-08-0069 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 22-ի <<Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի հարևանությամբ համայնքային հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը 18,67 քառ.մ, ընդամենը 18,67 քառ.մ մակերեսով կառուցապատված հողամասով կառույցը համայնքային սեփականություն համարելու մասին>> N 3390-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<18,67 (տասնութ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<15,1 (տասնհինգ ամբողջ մեկ տասնորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում <<համարելու>> բառից հետո լրացնել <<և օրինական ճանաչելու>> բառերը.
   3) նախաբանում <<կարգի>> բառից հետո լրացնել <<և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի>> թվերը և բառերը.
   4) որոշման 1-ին կետում <<սեփականություն>> բառից հետո լրացնել <<և այն ճանաչել օրինական>> բառերը.
   5) որոշումը լրացնել $1^{1}$. կետով հետևյալ բովանդակությամբ.

<<$1^{1}$. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Կարապետ Բաղդասարյանին:>>:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 22-ի N 3390-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2021 թվական հոկտեմբերի 26-ի N 2584-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

17.07.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2023 **թվականի** N 1782-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30 -Ի N 803-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Գյուլնարա Բեսալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոց N 52 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 70,7 քառակուսի մետր մակերեսով շինությունները օրինական ճանաչելու և կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 58,40 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 803-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով: Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Գյուլնարա Բեսալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոց N 52 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 70,7 քառակուսի մետր մակերեսով շինությունները օրինական ճանաչելու և կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 58,40 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 803-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<70,7(յոթանասուն ամբողջ յոթ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<67,9(վաթսունյոթ ամբողջ ինը տասնորդական)>> թվով և բառերով:

17.07.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2023 **թվականի** N 1781-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 44/1 ՀԱՍՑԵԻ 78,73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (71,08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 215,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N 44/1 հասցեի 215,3 (երկու հարյուր տասնհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24052023-08-0017 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի ,ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 133-Ա որոշումը, քաղաքացի Ռոզա Մկրտչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի օգոստոսի 23-ին N 14794 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N 44/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 78,73 (յոթանասունութ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (71,08 (յոթանասունմեկ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 643618 (վեց հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ռոզա Մկրտչյանին:
2. Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N 44/1 հասցեի 215,3 (երկու հարյուր տասնհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2263664 (երկու միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ռոզա Մկրտչյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ռոզա Մկրտչյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ռոզա Մկրտչյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոզա Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

17.07.2023

X ________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2023 **թվականի** N 1780-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻԼՎԱ ՀՈՎՍԵՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՎՁՆՈՑ ՓՈՂՈՑ N 69/2 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 61,14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ավչյան փողոց N 69/2 հասցեով բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանին (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 06-ի N 1407-Ա որոշում):

Քաղաքացի Սիլվա Խաչատրյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար , փաստացի զբաղեցրած 61,14 (վաթսունմեկ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 05052023-08-0015 վկայական) ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով , ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սիլվա Խաչատրյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 21-ին N 21730 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես սեփականություն իրենց նվիրատրված Ավչյան փողոց N 69/2 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 61,14(վաթսունմեկ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը որպես սեփականություն՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 176572(մեկ հարյուր յոթանասունվեց հազար հինգ հարյուր յոթանասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ :
3. Սահմանված կարգով կնքել հողի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին) :
4. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սիլվա Խաչատրյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Սիլվա Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2023 թվականի N 1779-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 12 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք N 12 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16022023-08-0013 վկայական):

Քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք N 12 հասցեի 162,27 (մեկ հարյուր վաթսուներկու ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից բնակավայրերի հասարակական կառուցապատում փոփոխելու և 74,09 (յոթանասունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան; 2,66 (երկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակական; 74,09 (յոթանասունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան գործառական նշանակությունը բնակելիից հասարակականի՝ որպես գինետուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 04-ին N 13958 թվագրմամբ).

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք N 12 հասցեի 162,27 (մեկ հարյուր վաթսուներկու ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք N 12 հասցեի 74,09 (յոթանասունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 2,66 (երկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի,իսկ Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք N 12 հասցեի 74,09 (յոթանասունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան գործառական նշանակությունը,որպես գինետուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Գևորգ Աշոտի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1778-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 38.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0628-0084) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի հարևանությամբ գտնվող 38.18 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0628-0084) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 72/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1777-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 26 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ 51,86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.03.1997 թվականի թիվ 51 որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Վարդան Աճեմյան փողոց, 26 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքից 51,86 քառակուսի մետր մակերեսով բնակարանին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 26 ՇԵՆՔ, 13/1 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1770-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 29/1 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0752-0058) ԵՎ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 29/5 ՀՈՂԱՄԱՍ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0752-0150) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Մարտիրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14629 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ս. Համբարձումյան փողոց 29/1 առևտրի սրահ (կադաստրային ծածկագիր 08-001-0752-0058) և Ս. Համբարձումյան փողոց 29/5 հողամաս (կադաստրային ծածկագիր 08-001-0752-0150) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 29/1 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի №1745Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 26 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ 40,52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.03.1997 թվականի թիվ 51 որոշումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Վարդան Աճեմյան փողոց, 26 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքից 40,52 քառակուսի մետր մակերեսով բնակարանին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 26 ՇԵՆՔ, 3/1 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» մայիսի 2023 թվականի № 1774-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ 87 (ՎԿԱՅԱԿԱՆ № 03052023-08-0022) ԵՎ ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ 87/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №03052023-08-0015) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարինա Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14636 թվագրմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մ. Ավետիսյան փողոց 1 շենք 87 (վկայական № 03052023-08-0022) և Մ. Ավետիսյան փողոց 1 շենք 87/1 (վկայական №03052023-08-0015) բնակարանների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 1 ՇԵՆՔ, 87 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2023 թվականի №177-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ, 1/9 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 1200.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0360-0001) ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 82.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի №1635–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Գերցենի փողոց, 1/9 հասցեին կից գտնվող 1200.03 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0360-0001) և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 82.62 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարարական շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ, 1/34 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1772-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ, 135 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 448.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 170.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի №1628–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Կազաչի պոստ թաղամաս, 135 բնակելի տանը կից գտնվող 448.62 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 170.55 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ, 135/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1771-Ա

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՖԱՅԵԼ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 56Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռաֆայել Մխիթարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №21758 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Ժառանգության իրավունքով քաղաքացի Ռաֆայել Մխիթարյանին պատկանող Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց, 56ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 56/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2023 թվականի №1770-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 4 ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №18082015-08-0023) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Շուշանիկ Մուրադյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13982 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Դուդկոյի փողոց, 4 ավտոլվացման կետ հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №18082015-08-0023) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 14.70 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 4 ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ**
2. 13.95 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 4/2 ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ**
3. 57.30 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 4/3 ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի